<u>Աշխատանքի ծածկագիր 7341</u>

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 26.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ Ա.Ղուկասյանի

մասնակցությամբ անդամներ՝

Հ.Պետրոսյանի

Վ.Ենգիբարյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քրեական դատավարություն բաժնի 6-րդ, 7-րդ, 9-րդ, 16-րդ, 25-րդ, 28-րդ, 31-րդ, 36-րդ, 37-րդ, 40-րդ հարցերը:

Հանձնաժողովը արձանագրում է, որ հավակնորդը որպես բողոքարկվող նշել է նաև քրեական դատավարության բաժնի 33-րդ, 34-րդ, 35-րդ, 39-րդ, 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 26-րդ, 27-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 39-րդ հարցերը, որոնք արդեն իսկ գնահատվել են գնահատման հանձնաժողովի կողմից և յուրաքանչյուրին տրվել է մեկ միավոր, հետևաբար Հանձնաժողովը դրանց չի անդրադառնում:

<u>Քրեական դատավարության բաժին</u>

Հարց 6

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը այն է՝ անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք և տուժողը հաշտվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ, *մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝* անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք, տուժողը հաշտվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ և առկա է հարուցված քրեական գործ, որը լիովին համահունչ է հարցադրմանը, քանի որ հարուցված քրեական գործի առկայությունը պարտադիր է:

Հարց 7

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ այո, քանի որ դատավորը կաշկանդված չէ գործի մինչդատական վարույթում արված եզրահանգումներով, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝* ոչ, քանի որ դատավորն ունի կանխակալ կարծիք դատական քննության առարկայի (մեղադրանքի) վերաբերյալ, *քանի որ դատավորը արդեն իսկ դիրքորոշում է հայտնել առաջադրված մեղադրանքի վերաբերյալ:*

Հարց 9

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ կոնկրետ բողոքի հանգամանքներով պայմանավորված իրավասու է կայացնել <<բ>> և <<գ>> կետերում նշված որոշումները, *մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝* բողոքը ճանաչելով հիմնավորված՝ որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, *քանի որ այն պարունակում է լիարժեք պատասխան հարցադրմանը, իսկ քրեական հետապնդում չիրականացնելու որոշումը վերացնելու իրավասություն Դատարանը չունի:*

Հարց 16

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ անհրաժեշտություն է առաջացել պարզելու մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը,

Հանձնաժողովը, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից երևում է, որ Քննիչը համաձայն չլինելով փորձագետի եզրակացության հետ՝ վերջինիս ոչ լրիվ լինելու

պատճառաբանությամբ կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն, հետևաբար <<կարող է>> եզրույթը չի կարող համարվել <<պարտադիր>>:

Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 25

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ բավարարել բողոքը, եթե Ա-ն կհիմնավորի, որ նախաքննության մարմնի կայացրած քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը հիմնավորված և օրինական չէ, *մինչդեռ ճիշտ պատասխանն է բ-ն՝ այն է՝* մերժելու Ա-ի բողոքը, քանի որ օրենսդիրը հստակ թվարկել է այն անձանց շրջանակը, ովքեր իրավունք ունեն բողոք ներկայացնելու քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ, որպիսի կարգավիճակ Ա-ն չի ունեցել քրեական գործով, *քանի որ այն պարունակում է լիարժեք պատասխան հարցադրմանը,* իսկ հավակնորդի կողմից տրված պատասխանը չի ներառում տեղեկություն թե արդյոք Ա-ի շահերին տվյալ որոշումը առնչվում է, թե ոչ:

Հարց 28

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ այո, եթե այդ գույքի վրա կարող է տարածվել բռնագանձում, *մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝* այո, եթե կան ապացույցների բավարար համակցություն առ այն, որ մյուս ամուսինը տեղեկացված է եղել, որ համատեղ սեփականությունն ավելացվել է հանցավոր ճանապարհով վաստակած միջոցների հաշվին, սակայն բացառապես այդ ավելացված մասի վրա, *քանի որ այն պարունակում է լիարժեք պատասխան հարցադրմանը,* իսկ հավակնորդի կողմից տրված պատասխանը թերի է:

Հարց 31

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ քննչական բաժնի պետը նման ցուցում տալու լիազորություն չունի, *մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ բողոքարկել դատախազին՝ կասեցնելով դրա կատարումը, քանի որ հավակնորդի կողմից տված պատասխանը չի պարունակում տեղեկություն առ այն, թե տվյալ դեպքում ինչպես պետք է լուծվի ցուցումի ընթացքը:*

Հարց 36

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ տեղանքի և շենքի զննություն, մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝ ճիշտ պատասխանը բացակայում է, քանի որ նշված բոլոր գործողությունները կատարելիս առանձին արձանագրություն չի կազմվում:

Հարց 37

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ այն դատարանին, ում վարույթում քննվում է քրեական գործը, մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է բոլոր պատասխաններն էլ ճիշտ են, *քանի որ այն պարունակում է լիարժեք պատասխան հարցադրմանը՝ ներառելով բոլոր հնարավոր դեպքերը քաղաքացիական հայցի ընդդատության վերաբերյալ:*

Հարց 40

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են, մինչդեռ ճիշտ պատասխանն է ա-ն՝ այն է հայցը թողնել առանց քննության՝ իրավունք վերապահելով քաղաքացիական հայց հարուցել քաղաքացիական դատավարության կարգով, *քանի որ տարբերակներից մեկում առկա է հաշտության համաձայնությունը հաստատելը, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ:*

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ *7341* ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 16-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ